ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք,
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 6-րդ փող.1,
Հեռ. 098-910-932 , qaxsi.kotayk@mail.ru

N 031-30
24 հունվար 2020թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պետրոսյան.

Ներկայացնում ենք Քաղսի համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշումները /հունվարի 13-ից մինչև 22-ը/:

Առդիր՝ 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռաֆայել Գրիգորյան

Կատ. ՝ Լ. Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 01

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 140 ՈՐՈՇՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Նորմատիվ Իրավական ակտերի 33 հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> օրենքի 7-րդ հոդվածի պահանջներով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի, հիմք ընդունելով քաղաքացի Շահեն Մաքսիմի Մեսրոպյանի ծնված 4 մայիսի 1983թ դիմումը և այն, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժիներական օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին չի առաջացնում սերվիտուտ:

Համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց պահպանման և սպասարկման համար հողամասի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը:*Որոշում եմ*

1.Ճանաչել Շահեն Մեսրոպյանի սեփականության իրավունքով պատկանող ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրայի 07-063-0003-0007 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.09738 հա մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ,որը փաստացի օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2.Վերականգնել Քաղսի համայնքի 4-րդ թաղամաս թիվ 48 հասցեում գտնվող Շահեն Մաքսիմի Մեսրոպյանի ծնված 04.05.1983թ. 973,8քմ մակերեսով հողամասի և դրա վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված ընդհանուր 193,28 քմ արտաքին մակերեսով բնակելի տան և շինության նկատմամբ սեփականության իրավունքը:

ա/Քաղսի համայնքի ղեկավարի 18 դեկտեմբերի 2019 N 140 որոշումով հասցեագրված Շահեն Մաքսիմի Մեսրոպյանի ծնված 04.05.1983թ. փոխարինել Շահեն Վիլիկի Մեսրոպյանի և նաև չեղյալ համարել 18.12.2019թ երկրորդ որոշումը:

3.Հողամասի սահմանները որոշում են <<Պիռամիդա>> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Քաղսի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
4.Քաղաքացի Շահեն Մեսրոպյանի բնակելի տանը տրամադրել հասցե գ.Քաղսի 4-րդ թաղ. տուն 48:

5.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Շահեն Մեսրոպյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի և բնակելի տան նկատմամբ ու տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
6.Որոշման կատարման կազմակերպումը ու պատասխանատվությունը վերապահել Քաղսիի համայնքապետարանի աշխատակազմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

20<u>20</u> թ. <u>13.01</u>
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 02

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԵՓԱԿԱՆ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականին դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Վարուժան Հայրապետյանի դիմումը. որոշում եմ

1.Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող Վարուժան Հայրապետյանին պատկանող սեփական տանը (վկայական 2222059) տրամադրել հասցե՝ գ. Քաղսի 2-րդ փողոց, 5-րդ փակուղի տուն՝ 8:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

20 թ. 15.01.

գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թվականի N 03

ԱԼԲԵՐՏ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածով, ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի,շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912 որոշման հավելվածով հաստատված կարգի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի, հիմք ընդունելով Ալբերտ Գևորգի Ստեփանյանի՝ ծնված 1979 թվականի սեպտեմբերի 13-ին, ներկայացված դիմումը և այն հանգամանքը, որ նշված հողամասը չի դասվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, իսկ ինքնակամ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, նաև դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի ներկայացնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.*Որոշում եմ*

1. Ճանաչել Ալբերտ Ստեփանյանի սեփականության իրավունքը Կոտայքի մարզ գ.Քաղսի 5-րդ փողոց տուն 10 հասցեում գտնվող(ծածկագիր 07-063-0067-0004) փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ: Սույն հողամասը օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2.Քաղսի համայնքի 5-րդ փողոց տուն 10 հասցեում գտնվող Ալբերտ Ստեփանյանին պատկանող (ծածկագիր 07-063-0067-0004) ծածկագրի տակ գտնվող 0.109 հա բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ

կառուցված 129,96 քմ մակերեսով անավարտ շինությունը ճանաչել օրինական, քանի որ շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարներ չեն գանձվում:

3.Քաղաքացի Ալբերտ Ստեփանյանին պատկանող շինությանը տրամադրել հասցե գ.Քաղսի 5-րդ փող.տոն 10
4.Հողամասի սահմանները որոշվում են <<Գեոլենդ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Քաղսի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել համայնքապետարանին:
6.Սույն որոշմամբ ծագող իրավունքները ենթակա են գրանցման ԱԳԿՊԿ մարզերի միավորված ստորաբաժանումում:
7.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020 թ. հունվարի 21
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 04

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի, հիմք ընդունելով Քաղսի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 6-ի N49 որոշումը և Կոտայքի մարզի Քաղսի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու համար աճուրդի մասին 2020 թվականի հունվարի 22-ի N1 արձանագրությունը. *որոշում եմ*

1. Հաստատել, որ 2020 թվականի հունվարի 22-ին Քաղսիի համայնքապետարանում Քաղսի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու համար աճուրդում հաղթող է ճանաչվել Կոտայքի մարզի Քաղսի համայնքի 1 փողոց, 1 փակուղի, 4-րդ տան բնակիչ՝ Արտակ Ատոմի Մաթեվոսյանը. ծածկագիր 07-063-0219-0011 0,64հա:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

20<u>20</u> թ. <u>հունվարի</u> <u>22</u>
գ.Քաղսի